

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ ԺԱՄԸ
14:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ` ՀՀ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին`

Խորհրդի անդամներ`

Խ. Հարությունյան	ՀՀ Ազգային ժողովի գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ
Հ. Հակոբյան	ՀՀ Ազգային ժողովի սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ
Ա. Հարությունյան	ՀՀ բնապահպանության նախարար
Տ. Դավթյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Ա. Գրիգորյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար
Վ. Գաբրիելյան	ՀՀ ֆինանսների նախարար
Վ. Վարդանյան	ՀՀ քաղաքաշինության նախարար
Ա. Մովսիսյան	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար
Հ. Դարբինյան	ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ
Ա. Պողոսյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
Կ. Հարությունյան	ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
Ռ. Մարտիրոսյան	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ
Ա. Ղազարյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության նախագահ
Ա. Մարտիրոսյան	ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի բնապահպանական ծրագրերի ղեկավար
Լ. Յագուբյան	«Սպառողների իրավունքների պաշտպանություն» ՀԿ-ի նախագահ
Դ. Բոբերկ	ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի մշտական

ներկայացուցչի տեղակալ

Ս. Ադամյան	«Հասարակական էկոլոգիական դաշինք» ՀԿ-ի համակարգող
Գ. Օզանեզովա	ՀՀ բուսաբանական ընկերության փոխնախագահ
Ա. Վերմիշյան	«Բուրգ» բնապահպանական երիտասարդական ՀԿ-ի ներկայացուցիչ
Կ. Դանիելյան	«Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ, ԿԶԱԽ-ի քարտուղար

Հրավիրվածներ`

Ս. Պապյան	ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ
Ա. Հովակիմյան	ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ
Տ. Գևորգյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Կ. Մարգարյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության պետ
Հ. Սիմոնյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության գլխավոր մասնագետ
Մ. Կորխմազյան	ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի արտաքին կապերի բաժնի պետ
Ն. Զաստուխովա	ՀՀ արտաքին գործերի նախարարության ՄԱԿ-ի բաժնի վարիչի պաշտոնակատար

1. 2012 թվականին Բրազիլիայի Հանրապետության Ռիո դե Ժանեյրո քաղաքում կայանալիք «Ռիո+20» համաշխարհային գագաթաժողովի օրակարգն ու ընդունվելիք վերջնական փաստաթղթի կառուցվացքը ձևավորելու շրջանակներում Հայաստանի Հանրապետության կողմից ներկայացվող առաջարկությունների քննարկում

(Կ. Դանիելյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 1-ին հարցը զեկուցեց «Հանուն մարդկային կայուն զարգացման սառցիացիա» ՀԿ-ի նախագահ, ԿԶԱՄ-ի քարտուղար Կ. Դանիելյանը և նշեց, որ նախատեսվում է ձևավորել փորձագիտական խումբ՝ «Ռիո+20» համաշխարհային գագաթաժողովում ներկայացվելիք հիմնական հարցերի վերաբերյալ նախնական փաստաթղթի մշակման համար: Դրանից հետո պետք է կազմակերպվի ու անցկացվի ազգային սեմինար կամ համաժողով, որի հիման վրա էլ հետագայում կձևավորվի ազգային զեկույցը: Այդ կապակցությամբ ձևավորվել է աշխատանքային խումբ՝ ՀՀ բնապահպանության նախարարության, ՀՀ արտաքին գործերի նախարարության և շահագրգիռ ՀԿ-ների ներկայացուցիչների մասնակցությամբ: Աշխատանքային խմբում քննարկվել և ըստ այդմ մշակվել են համապատասխան առաջարկություններ, որոնք պետք է ներկայացվեն «Ռիո+20» համաշխարհային գագաթաժողովում:

ՀՀ բուսաբանական ընկերության փոխնախագահ Գ. Օգանեզովան առաջարկեց ներառել նաև այլընտրանքային էներգետիկայի, մասնավորապես, Հայաստանում ՓՀԷԿ-երի համակարգի զարգացման հարցը (խոչընդոտում է ջրային էկոհամակարգերի էկոլոգիական կայունությանը՝ կենսաբազմազանության կորստին): Այդ կապակցությամբ անհրաժեշտ համարեց ՓՀԷԿ-երի կառուցման համար սահմանել որոշակի չափորոշիչներ՝ հիմնված միջազգային փորձի վրա:

ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Կ. Հարությունյանն առաջարկեց, որպեսզի «Ռիո+20» համաշխարհային գագաթաժողովում ներկայացվելիք միջոցառումների ցանկում «Հանուն կայուն զարգացման կրթության իրականացում» բառերը փոխարինել «Հանուն կայուն զարգացման կրթական ծրագրերի իրականացում»:

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանն առաջարկեց հավանության արժանացնել 2012 թվականին Բրազիլիայի Հանրապետության Ռիո դե Ժանեյրո քաղաքում կայանալիք «Ռիո+20» համաշխարհային գագաթաժողով ներկայացվելիք՝ շրջանակներում Հայաստանի Հանրապետության կողմից ներկայացվող առաջարկությունների վերջնական խմբագրված տարբերակը:

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) առաջարկել «Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ, ԿԶԱԽ-ի քարտուղար Կ. Դանիելյանին՝

ա. «Ռիո+20» համաշխարհային գագաթաժողովում ներկայացվելիք հիմնական հարցերի ցանկում ներառել նաև ՀՀ բուսաբանական ընկերության փոխնախագահ Գ. Օգանեզովայի ներկայացրած առաջարկությունը,

բ. հաշվի առնել նաև ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Կ. Հարությունյանի առաջարկությունը և ըստ այդմ խմբագրել «Ռիո+20» համաշխարհային գագաթաժողովում ներկայացվելիք հիմնական հարցերի ցանկը.

2) հաստատել 2012 թվականին Բրազիլիայի Հանրապետության Ռիո դե Ժանեյրո քաղաքում կայանալիք «Ռիո+20» համաշխարհային գագաթաժողով ներկայացվելիք՝ շրջանակներում Հայաստանի Հանրապետության կողմից ներկայացվող առաջարկությունների վերջնական խմբագրված տարբերակը:

2. Այլ հարցեր

(Ս. Ադամյան, Տ.Սարգսյան)

1) «Հասարակական էկոլոգիական դաշինք» ՀԿ-ի համակարգող Ս. Ադամյանը ներկայացրեց «ՍՈՍ Սևան» խմբի հաղորդագրությունը՝ «Գեոպրոմայինգ Գոլդ» ընկերության տնտեսական գործունեության արդյունքում Սևանա լճի տարածքում հասցվող բնապահպանական վնասերի հասցման վերաբերյալ:

Այդ կապակցությամբ՝

ա. ՀՀ բնապահպանության նախարար Ա. Հարությունյանը նշեց, որ ՀՀ օրենսդրությամբ արգելվում է Սևանա լճի ավազանում իրականացնել վերամշակման որևէ գործունեություն: Ինչ վերաբերում է «Գեոպրոմայինգ Գոլդ» ընկերության տնտեսական գործունեությանը, ապա տվյալ ընկերությանը տեղյակ է պահվել հանքի շահագործման գծով օրենդարական սահմանափակումների մասին: Այսպիսով, ներկայացված հարցի գծով համապատասխան ուսումնասիրություններ դեռևս չեն իրականացվել, ուստի և դեռևս բացահայտված չեն նաև խախտումներ,

բ. ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար Ա. Մովսիսյանը նշեց, որ «Գեոպրոմայինգ Գոլդ» ընկերության կողմից իրականացվում է միայն ջարդում և տեսակավորում, որը չի արգելվում ՀՀ օրենսդրությամբ և չի համարվում վերամշակում: Այսպիսով, առաջարկեց ևս մեկ անգամ ուսումնասիրել «Գեոպրոմայինգ Գոլդ» ընկերության

գործունեությունը և ըստ այդմ ներկայացնել համապատասխան մասնագիտական եզրակացություն.

2) «Բուրգ» բնապահպանական երիտասարդական ՀԿ-ի ներկայացուցիչ Ա. Վերմիշյանն առաջարկեց քննարկման առարկա դարձել Չիչխան գետի վրա «Թռչկան» կոչվող հանդամասում ՓՀԵԿ-ի կառուցման հետ կապված հարցը:

Այդ կապակցությամբ`

ա. ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը նշեց, որ ներկայացված հարցը բավիցս քննարկվել է ինչպես ՀՀ բնապահպանության նախարարությունում, այնպես էլ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովում: Ուստի, ջրահատկացման բոլոր թույլտվությունները համապատասխանում են ՀՀ օրենսդրությանը: Այսինքն, ջրահատկացման ժամանակ պետք է առկա լինեն հստակ պայմանագրեր, որոնք կհանդիսանան նաև լիցենզիայի պայման, և պայմանագրային պարտավորությունների խախտման պարագայում շահագործող սուբյեկտները կզրկվեն լիցենզիայից: Ընդ որում, առկա են մասնագիտական եզրակացություններ, որոնք հրապարակայնորեն ներկայացվել են ՀՀ բնապահպանության նախարարի կողմից,

բ. ՀՀ բնապահպանության նախարար Ա. Հարությունյանը նշեց, որ ջրահատկացման գծով ամրագրվել են հետևյալ նախապայմանները`

- ամռան ամիսներին ՀԵԿ-ը չպետք է գործի (պայմանավորված զբոսաշրջիկների հնարավոր այցելություններով),

- ըստ նորմատիվային գրաֆիկական հաշվարկների` Էկոթողքը 160 լիտր/վրկ-ի փոխարեն սահմանվել է 400 լիտր/վրկ,

- միացման կետը պետք է լինի ավտոմատացված` կախված ջրի մակադակից:

Ինչ վերաբերում է պահպանվող տարածքի ռեժիմի խախտմանը, ապա տվյալ տարածքը համարվում է բնության հուշարձան, որի վրա չեն տարածվում պահպանվող տարածքի համար սահմանված ռեժիմները:

Քննարկումներից հետո որոշվեց`

1) հանձնարարել ՀՀ բնապահպանության նախարար Ա. Հարությունյանին և ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարար Ա. Մովսիսյանին, համագործակցելով «Հասարակական Էկոլոգիական դաշինք» ՀԿ-ի և «ՍՈՍ Սևան» խմբի ներկայացուցիչների հետ, համատեղ ուսումնասիրել «Գեոպրոմայնինգ Գոլդ» ընկերության գործունեության գծով ներկայացրած խնդիրը.

2) հանձնարարել ՀՀ բնապահպանության նախարար Ա. Հարությունյանին՝ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ ևս մեկ անգամ քննարկման առարկա դարձնել Չիչխան գետի վրա «Թռչկան» կոչվող հանդամասում ՓՀԷԿ-ի կառուցման հետ կապված հարցը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ